ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

e – mail: verindvin@mail.ru

հեռ. 0235 6-26-86

ՈՐՈՇՈՒՄ-22

30.11 .2020 թվական

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14 –րդհոդվածի 6-րդ կետի դրույթներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Վերին Դվին համայնքի ավագանու թիվ 6 նիստի օրակարգի հետևյալ հարցերը

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԱՍՏԻՔ /ՆՈՐ/ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ և ՆՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցը հաստատվեց՝ կողմ-6, դեմ-0, ձեռ.-0

Ավագանու անդամներ՝

1.Ա. Պետրովա-

2. Զ. Չիչյան _

3. Մ. Լազարևա-

4. Կ.Նիկոլան –

5. Ս. Միխայլով –

6. Ա. Բաղալյան –

/Համայնքի ղեկավար՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

e – mail: verindvin@mail.ru

0235 6-26-86

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն

30.11.2020 թվական

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ
ՀԱՍՏԻՔ /ՆՈՐ/ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 40-րդ հոդվածներով, <<Պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ստեղծել համայնքի ղեկավարի տեղակալի նոր հաստիք:

Ավագանու անդամներ՝ կողմ – 6, դեմ – 0 , ձեռ. - 0

1. Մ. Լազարևա –
2. Ջ. Չիչյան-
3. Կ. Նիկոլաև -
4. Ա. Բաղալյան –
5. Ս. Միխայլով-
6. Ա. Պետրովա -

Համայնքի ղեկավար՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

e – mail: verindvin@mail.ru

0235 6-26-86

ՈՐՈՇՈՒՄ N 24 –Ն

30.11.2020թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 240,0 հազար դրամ :

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ջ. Չիչյան

3. Մ. Լազարևա-

4. Ս. Միխայլով –

5. Կ. Նիկոլան –

6. Ա. Բաղալյան –

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

e – mail: verindvin@mail.ru

0235 6-26-86

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25 –Ն

30.11.2020թ.

ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ և ՆՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել գյուղապետի առաջարկած աշխատակազմի հետևյալ թվաքանակը, հաստիկացուցակը և նրանց պաշտոնային դրույքաչափերը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Պաշտոնայի դրուքաչափը /ՀՀ դրամ/
1	Աշխատակազմի քարտուղար	1	160 000
2	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	155 000
3	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	150 000
4	աշխատ. առաջին կարգի մասնագետ	1	140 000

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Պաշտոնայի դրուքաչափը /ՀՀ դրամ/
1	օպերատոր	1	93 000
2	այգեպան	0.75	90 000
3	պահակ	1	90 000
4	պահակ	1	90 000

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Պաշտոնայի դրուքաչափը /ՀՀ դրամ
	Մշակույթի տան վարիչ	1	93 000
	գրադանավար	1	90 000
	սպորտ հրահանգիչ	0,75	93 000
	. համույթի ղեկավար	0,75	90 000

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Ե Զ ՀՈԱԿ

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Հաստիքի միավորը
1	Տնօրեն	1	130 000
2	հաշվապահ	0,5	120 000
3	Դաստիարակ	2,24	125 000
4	Երաժ.դաստիարակ	0,25	120 000
5	Դաստիարակի օգնական	2	93 000
6	Խոհարար	1	93 000
7	Խոհարարի օգնական	0,5	93 000
8	Բուհ. Քույր	0,5	93 000
9	Հավաքարար	0,5	93 000
10	Տնտեսվար	0,25	93 000
11	պահակ	1	93 000

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝6, դեմ՝ 0 , ձեռնպահ՝0

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ջ. Չիչյան-

3. Մ. Լազարևա-

4. Ս. Միխայլով –

5. Կ. Նիկոլան –

6. Ա. Բաղալյան –

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

e – mail: verindvin@mail.ru

0235 6-26-86

ՈՐՈՇՈՒՄ N-26

30.11.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվին համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝6 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ջ. Չիչյան -

3. Մ. Լազարևա-

4. Ս. Միխայլով –

5. Կ. Նիկոլան –

6. Ա. Բաղալյան –

ՀԱՎԵԼՎԱԾ
ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԵՄԲԵՐԻ 30 –ի թիվ 26-Ն
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ

Արարատի մարզի Վերին Դվին համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչհիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ.. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն ենթակետի «ա» պարբերությունով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

Սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0,5գործակցի կիրառմամբ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

9) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.

. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսումվաճառքի կազմակերպման դեպքում՝3300դրամ.

. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ.

. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ.

. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ.

. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ:

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

. մինչև 26 քառակուսիմետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.

. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝3300 դրամ.

. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերեսունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ.

. 101-իցմ ինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6000 դրամ.

. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ.

. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ:

Սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0,3 գործակցի կիրառմամբ

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ.

գ. սոցիալական զովազդի համար 0 դրամ

դ. Այլ արտաքին զովազդի համար՝ 1500 դրամ.

ե.Դատարկ զովազդային վահանակների համար այլ արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% չափով՝

զ.եթե արտաքին զովազդ տարածող զովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության զովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով

14. Համայնքի տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար՝սահմանվում է 10 000 դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

. Արարատի մարզի Վերին Դվին համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվահամար սահմանվում է 1000 դրամ:

- Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվողհողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 400 դրամ :

- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներին աճուրդների մասնակցության համար ծառայությունների համար մուտքավճար ՝ 1000 դրամ:

- Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահման ներում՝

ա. Բնակելի նշանակության շենքերում կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և(կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ութսուն դրամ,

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանությոան վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

- առևտրի (այդթվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ,

- կրթական, մշակութայի, առողջապահական, սպորտային գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակակա նշինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երկու դրամ,

- համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝

ա. համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ յոթ հազար դրամ

բ. Այլ համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ տասնհինգ հազար դրամ

5. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	0
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 1000 2000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 0 Խոշոր կենդանի 0
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	500
5	Ախտահանություն	1 քառ. մետր 100
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն 1000
8	Արհեստական սերմնավորում	15000
9	Կենդանիների նախասպանդային զննում՝կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի 1000 Խոշոր կենդանի 2000

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա